

ՅՈՎՆԱՆ Վ. ԵՂԻՆԵԱՆ ԵՒ ԳՈԿԻՆՑԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՍՏԻՈՅ (1665—1728)

Այլ կարգանք երանաշնորհ Մխիթար Աբբահայր վարուց մէջ, զոր գրած է իր առաջին աշակերտն ու քարտուղարն Հ. Մատթէոս Վ. Եւդոկիացի. «1695. Սեբաստիա եկաւ Յովնան Վ. Եւդոկիացի, 26 տարեկան, որ նոր գաւազան առած էր Գալուստ Վ. էն, որ է Կայծակն, եւ Ս. Նշանի վանքն իջեւանեցաւ: Այս ատեն Մխիթար սարկաւագն 19 տարեկան էր. եւ 1695 Մարտին Յովնան Վ. ին հետ Սեբաստիայէն մեկնեցաւ ուրիշ ուղեւորներու հետ: Մխիթար Ճամբան Յովնան վարդապետն ուղղափառութեան դարձուց, եւ համոզեց զինքն որ միասին չուով երթան: Ճամբան, Մալաթիա քաղաքին մտն, մեծ գետ մը կար՝ վրան կամուրջ. բայց գարնանային ժամանակ ըլլալուն՝ ջուրն յորդած էր: Մխիթար իր զօրաւոր գրաստն Յովնան Վ. ին տուաւ, եւ անոր վատոյժ գրաստն առաւ: Կետին խորքը, հազիւ գետին կէսը, Մխիթարայ գրաստին համետը բրդաւ եւ քովը մնաց, իսկ հոսանքը գրաստն առաւ գնաց: Մխիթար լո-